

ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՄԵԾԱՆՈՒՄ Է

Կովկասի արիւնոտ դէպքերի մասին առաջին յօդուածու գրելիս մահմեղականները գեռ հանդէս չէին բերել իրենց բարբարոսութեան գլուխ-գործոցը:

Այնուհետեւ արիւնոտ դէպքերը լաջորդեցին միմեանց մէկը միւսից վալրենի, մէկը միւսից դժոխալին:

Արիւնաներկ օրերի մի երկալն շարք էր ալդ, օրեր, որոնք մրցում էին թրքական կարմիր օրերի հետ և գերազանցում ամեն տեսակէտից:

Ո՞վ կարող է հաւատալ թէ քսաներորդ դարու մէջ ենք, ո՞վ կարող է հաւատալ թէ մի եւրոպական համարուած պետութեան մէջ ենք ապրում, եւրոպական արդարադատութեամբ զինուած մի կառավարութեան հովանու տակ գտնւում:

Սա մի խաբուսիկ երազ չէ, թիւրիմացութիւն չէ:

Մահմեղական խուժանը, քսաներորդ դարում, ուռւսական պետութեան մէջ, ոտքից գլուխ զինուած, կանոնաւոր շարքերով շարժւում է Շուշի քաղաքի վրայ: Խուժանը գրաւել է Եւլախից Շուշի տանող ճանապարհը, որոնց թիւը հազարների է հասնում: Այդ հազարները կազմում են երեկուալ նրկագործ գիւղացիք, իրենց ճակատի քրտինքով ապրող ժողովուրդը: Սրանց առաջնորդում են տարին ասաներկու ամիս զողութեամբ ու աւազակութեամբ ապրող բէկերն ու խաները, որոնցից շատերը պետական պաշտօնեաներ են—գաւառապետներ, պրիստաւներ և ալին: Գիւղացիներից շատերը նոյն այդ աւազակ բէկերից ու մահմեղական պաշտօնեաներից կեղեքուած, հարստահարուած թշուառներն են, որոնք այսօր կեղեքողի, հարստա-

Հարողի ետևից ընկած՝ թողնելով տուն ու տեղ, վար ու ցանքս, գնում են Ծուշուալ հալերին կոտորելու...

Ի՞նչու:

Որովհետեւ այդ երեկուալ աւազակները հաւատացրել են մահմեդական ամբոխին, թէ ոռւսաց տիրապետութիւնը վերջացած է Կովկասում, թէ իրենք շուտով Սուլթանի աջակցութեամբ կը հաստատուին իրենց կէս անկախ խանական ու բէգական իրաւունքների մէջ, թէ բացի թալանից, որպէս վարձատրութիւն, կստանան նաև հալերից խլուած անշարժ կալուածքներ...

Այս է խուժանին ոգեսրող և ոտքի հանողը:

Խոկ աւազակ բէկերին ստքի հանողն ուրիշ բան է. Աղաւ-Թոփչիբաշլեները սրանց հաւատացրել են թէ կալսը Գօլիցինի բերանով պատուիրել է կոտորել հալերին, վերջ տալ նրանց կեանքին ու գոլքին:

Եւ ապա երբ հալը չի լինի, չի լինի և ոռւսը, այն ժամանակ մահմեդական դրօշը կը պարզուի Կովկասի վրայ ու *νιν λε Soultan!*

Ահա այս հոգով պատրաստուած խուժանը յարձակ ւում է Շուշուալ վրայ. վալրենի «Ես Ալի» բացականչութեան հետ գնդակի կարկուտ է տեղում հալկական թաղի և այդ թաղը պաշտպանող մի բուռն հալ անձնազոհների զլիսին. Ալլում է քաղաքը, միլիօնների գոլքը կը առ ու աւարի է մատնում, սակայն «Ալին» երեւի իւր հետեւորդների գազանութիւնը տեսնելով, դարձնում է նրանցից իւր երեսը և նրանք ոչ միայն չեն կարողանում Շուշին վերցնել ու հալերին մորթել, ալլ ընդհակառակը, փառաւոր ջարդ կը ելով, ստիպւում են սպիտակ դրօշը պարզել...

Սպիտակ դրօշը, հաշտութիւն հալցել մի բուռն հալերից... վայ ձեզ, իսլամի առիւծ զաւակներ. —

Այս իրողութեան առաջ վրբում է Բագուալ մահմեդականութիւնը հանդերձ Աղաւ-Թոփչիբաշլեներով. Մահմեդական քաղաքալին վարչութիւնը յանձին իւր հոչակալումայ

ուր Սաֆարալիկեմ, սպառնալից լայտարարութիւններ է առում: Եւ ապա օրը ցերեկով զէնք ու ռազմամթերք են փոխադրում նաւթային թագաւորութեան մայրաքաղաքի աւազականոցները — Սաբունչի, Ռոմանի, Բալախանի, Զաք-ըատ և ալլ՝ մի կողմից, Բիբի-Հէլբաթ՝ միւս կողմից: Սրանք փոխադրում են կառքերով, ձիերով, վագոններով և բաժանում հրամանի սպասող աւազակներին:

Իհարկէ ոստիկանութիւնը շատ լաւ տեսնում է այս տենդային գործունէութիւնը, բայց վակում է աչքերը, միւնոյն ժամանակ բաց է անում գրպանը: Սա ոստիկանութեան և աւելի բարձրի հաւատամք ի մի ոսկիշան է: Ոստիկանութեան շատ պէտք է, թէ բնչ է սպառնում քաղաքին: Եթէ Պետերբուրգում, բարձրաստիճան անձինք չեն քաշւում ամբողջ Ռուսաստանի պրեստիժը, ոյժը, վառքը ծախել մագոնիալին, բնչու Բագուալ իշխանութիւնը պիտի ամաչի Բագուն, նոյն իսկ անբողջ Կովկասը վաճառել մահմեդականներին...

Ում ցանկալի չէ գունատ էպօլէտներն ուսին քաղցած թափառել, թո՞ղ օգտուի ներկալ անիշխանական դրութիւնից, որով միւնոյն ժամանակ երկու տէրանց ծառայած կը լինի՝ իշխանութեան և մամոնտիին.—այս է հանգուցեալ երկաթի ռեժիմի հաւատարիմ գործակալների տեվիզը, որոնց ձեռքից դուրս է սողում իշխանութիւնը, իսկ ոտքերի տակից սահում է հողը:

Եւ այս լանցաւոր զանցառութեան շնորհիւ, երկրորդ անդամ լինելով, մահմեդական Ղոչիները հուր ու սուր են տարածում Բագուալ և նաւթային դաշտի վրայ: Ալրւում են բոլորը, կողոպտում է ամեն ինչ, լօշտուում են մարդիկ: Վնասը տասնեակ միլիոնների է հասնում: Երկիրը Սոդոմական տեսարան է ներկայացնում: Տեղական իշխանութիւնը դեռ իփել է աչքերը: Բայց ահա թնդանօթներ են դրկուում նաւթագաշտը, կօգակների հարիւրակներ են սլանում: Ինչ պատահեց... Շատ հասարակ բան: Մի քանի կէտերում համախմբուած հայերը չեն ուզում մորթ-

ուել և ալդպիսով արգելք են դառնում դրամալի լաջող վերջաւորութեան, Մինչև անդամ «ՀՕՅ. Յր.» թղթակիցը ոմբակոծել է տալիս Սօվէտ Սըեզդի ամբողատորեան...

Ախար, պարոններ, սրանք ալճքան բացալալտ երեւոյթներ են, որոնց տակ թագնուած գաղտնիքը մերկացնելը դժուար չէր: Բայց նաւթարդիւնաբերողների ներկաւացուիցները, փոխանակ ֆադէւել նման աշը փակող մարդկանց պաշտօնից հեռացնելլ պահանջելու, պահանձում են, որ կենդրոնական իշխանութիւնը կաշառակերպների նար և իհարկէ քաղցած լէգէօններ ուղարկէ Բագու: Ալսինքն չարիքը արմատախիլ անելու տեղ, չարիքի նոր թարմ տունկեր են բերում Բագու:

Սա իհարկէ ծիծաղելի է, եթէ միայն ներկալ պարմաններում կարելի լինի ծիծաղել:

Բագուալ երրորդ հայկական ջարդը, արդէն պատռում է դիմակը: Այս անգամ այլևս մահմեդականները մենակ չեն: Նրանց հետ ձեռք ձեռքի տուած գործում են ոռու խուլգանները, կօզակները և տեղ—տեղ՝ զօրքը:

Հաւատացէք որ քընիքական դարձած կոտորածները, արիւնչեղութիւնները, հրձիգութիւնները եթէ մեզ աստիճանաբար նոխապատրաստած չը լինէին աւելի դժոխալին տեսարանների համար, ամբողջ Ռուսաստանում՝ ընդհանրապէս և Բագուամ մասնաւորապէս, կատարուած բացարձակ սպանութիւնները և կողոպուտը զօրքի ու ոստիկանութեան պաշտպանութեան տակ, շատ շտերին կը գիտացնէին:

Այս վերջին դէպքի առթիւ հրատարակուած հեռագրատական լուրերի ամեն մի տառից հարիւրաւոր թշուառների հառաջանքն է լսւում:

Եւ այս տեղի է ունենում այն ժամանակ, երբ կարսերական գահից մարդկանց շնորհւում է ընդարձակ քաղաքացիական ազատութիւն և հրատարակւում է անձի անձեռնմխելութիւնը:

Արդեօք Ռուսաստանում Օսմանեան քաղաքականու-

նութիւնն է կրկնուում։ Ալդ հօ միայն Տաճկաստանումն էր. որ սուլթանական իրադէները երկու երես ունեն մէկով արտօնութիւններ, իրաւունքներ են տալիս, իսկ միւսով հրամալում են արտօնեալներին ջնջել, որպէս զի՞նքնըստինքեան ջնջուի արտօնութիւնը, իրաւունքը... Մեղ մօտ էլ... Մենք տրամադիր ենք չը հաւատալու, բայց Ծուսաստունը ծալրէիծայր լողում է արեան մէջ և այդ կարմիր վտակներում խեղդւում են Ծուսաստանի մը-տաւոր ծաղիկները, լաւագոյն քաղաքացիները, առանց ազ-գի ու կրօնի խորութեան։ Նահանգական, գաւառական և գիւղական իշխանութիւնների աշքի առջև, մինչեւ ան-գամ սրանց անմիջական դրդմամբ ու աջակցութեամբ ուուս խուլիգանները մի կողմից, իմահմեգական խուլիգան-համիս-լամականները միւս կողմից պետութեան լաւագոյն ոլժե-րի դիմակներով ծածկում են երկիրը և նրանց թանգարին արիւնով ներկում իրենց պիղծ ձեռքերը։

Ի՞նչ է նշանակում այս:

Մի անգամ Նովիկովը (Բագուի նախկին քաղաքագլու-իր) քաղաքացիական մի անօրինակ քաջութիւն ունեցաւ մատնացոյց անելու Փետրուսիեան դէպէերի գլխաւոր հետինին։

Ո՞րքան շատ է ալժմ դրանց թիւը Կովկասում։

Սակայն պայմանները փոխուել են և այժմ հարկ չը կալ, որ ուրիշները լիշեն ալժմեան ոճրագործութիւնների հեղինակների անունները։ Այդ անուններն ալժմ զրջում են բերնէ բերան. ալժմ ամեն ոք գիտէ, թէ կովկասեան ձուկը որտեղից է հստում։

Բայց երբ արիւնաներկ հայը իւր քանդուած կողապ-տուած օճախի վլատակների տակից երկիւղով դուրս է հանում գլուխը և խնդրում պաշտպանութիւն, արդարա-դատութիւն, նրան ասում են.

—Դու պիտի պատժուես...

Եւ մեղագրանքներ են, որ բարդում են տառապեալ հայի գլխին, որոնք բաժանւում են զանազան կատեգո-րեանների։

Մեզ մեղադրում են նրանում, որ մտաւորապէս ու տնտեսապէս յառաջադիմելու լանդգնութիւն ենք ունեցել, որ լետ ենք թողել մեր դրացիներին, օրինակ մահմեդականներին, որոնք իրենց ոոկի ժամերից մի նշանաւոր մտար զոհում են օրական հինգ անգամ նամազ կատարելուն: Զը կարծէք, ընթերցողներ, թէ այս մեղադրանքը զուրկ է տրամաբանութիւնից: Զի՞ որ գալլը մութ գիշեր է սիրում. չէ՞ որ լուսը ծակում է խաւարի ոգով աշքերը, և մերկացնում է նրան իւր ամբողջ ալլանդակութեամբ. այն ինչ մենք լո՞ւս պոռակով առաջ էինք վազում:

Մեզ մեղադրում են, որ խոհեմութիւն չունեցանք մեր արտասուքը երկաթի ոէժիմի աչքից թագցնելու, երբ մեր եղբայրներին ու քոյրերին Թիւրքիայում սըի էին քաշում: Այս մենք պէտք է գիտնալինք որ Թիւրքիայի և Ռուսաստանի քաղաքական հայեացքների միջև ոչինչ տարբերութիւն չը կալ, որ հայտակր ստրուկ է և չը պէտք է ունենալ սեփական կամք, համոզում, զգացում. ուրեմն նա չը պիտի լաց լինի ոչ միայն այն ժամանակ, երբ սուրբ ծակում է արիւնակցի սիրտը, ալև այն ժամանակ, երբ ծակում է իւր կուրծքը...

Լայցը ինքնըստինքեան բողոք է, իսկ բողոքը ստրկի կողմից — յանցանք:

Մեզ մեղադրում են, որ ժամանակից շատ առաջ զգացինք ազգային ինքնաճանանչութեան արժեքը և ապօրինի վայնասուն բարձրացրինք, երբ իւր երկաթի դաւանանքին հաւատարիմ ոեժիմը ուզեց արմատախիլ անելու հայ լեզուն, զպրութիւնը, կրօնը և ալլն, որոնք կազմում են մեզ վիճակակից ազգերի գոլութեան միակ ֆակտորները: Եւ ալդ վայնասունով մենք ծնունդ տուինք Քօնդուկովներին, Գօլիցիններին իրենց մի շարք հետեւորդ ներով:

Իսկ միթէ մեզ չեն մեղադրում նաև այն բանում, որ մենք մեր միջից ծնունդ տուինք Լօրիս-Մելիքովի նը-ման մի ազատամիտ գեներալի, որը քիչ մնաց պիտի խա-

բէր Աղէքստնդը Բ. կալսեր և Ռուսաստանի սահմանադրութիւնը ստորագրել պիտի տար:

Այս, եթէ ամեն մի երևոլիթ իւր սեփական գրպանի շահի ու փառքի արշինով չափող բիւրոկրատիալի խելքով դատելու լինենք, կը տեսնենք որ մեղադրանքներն արդարացի են, ուոնք ի հարկէ առանձնապէս նպաստեցին հայկական չարիքի հիմքն ամբազնդելուն:

Սակայն այս բոլոր լանցանքները ոչինչ են այն խոզոր լանցանքի հանդէպ, որ մենք գործել ենք ու գործում ենք, բայց որի մասին ամենալն խոհեմութեամբ լուսում են մեզ դատապարտողները:

Հայի գործած ամենախոշոր և անքաւելի լանցանքն այն է, որ չափազանց ժլատ է. չը գիտէ կամ չի ուզում կաշառել:

Լազարեանը խոշոր գումարներ է ծախսում Մոսկուալում ճեմարան բանալու և ապահովելու համար։ Ժամհարեանները հարիւրհազարներ են զոհում աշխատանոցի համար։ Ծատուրեանը Լոնդոնում լորդերին է հիւրասիրում, Մանթաշեան, Ղուկասեան, Արաֆելով և ալլքմիլիոնների վրայ միլիոններ են դարսում և վերջապէս խոշոր գումարներ են ծախսում կրթութեան և ալլ մարդասիրական գործերի վրայ, — այն ինչ եթէ հայր ալդ ծախսուած միլիոնների կէսը զոհէր հարկաւոր մարդկանց կաշառելու գործին, նա ազատ կը մնար ամբաստանութիւններից, ուրեմն և այսօր չէր ենթարկուի ոչ մահմեդականների սրին, ոչ խուլիգանների ջարդ ու կողոպուտներին.

Գիտեմ Ռուսաստանի լաւագոյն քաղաքացիները մեզ կասեն, որ դա գոյութիւն պահպանելու ամենաստոր միջոցն է, որ լաշս քաղաքակիրթ մարդկութեան նոյնքանդատապարագելի է կաշառողը, որքան և կաշառուղը և ալդքան ստոր միջոցներով կարող են իրենց գոյութիւնը պահպանել ուղ ու ծուծով ստոր ցեղերը միալն, որպէս օրինակ մահմեդականները...

Այս, իրաւունք ունիք, պարոնները միթէ մենք չը գիտենք որ կաշառելուց ու կաշառուելուց է, սաոր բան չը կալ և չէք տեսնում որ մենք չենք դիմել այդ ստոր միջոցին, որի համար էլ շարունակ պատժւում ենք:

Սակայն բարեհաճեցէք այդ բարոլագիտութեան բարձունքից մի բօպէց ցած նալել և տեսէք թէ ինչ է ներկայացնում ձեր անմահ բանստեղծի—Ներմօնտովի սիրած ու երգած սիրուն Կովկասը, տեսէք թէ այդ երկիր բնական գեղեցկութիւնները իւր անխոնչ աշխատութեամբ մշակող, նրան հարստացնող, ծաղկեցնող հայ ժողովուրդը ինչչէս է լողում իւր սեփական արեան ալիքների մէջ...

Ի՞նչ ունիք ասելու գետի նման հօսող հայ արեան մասին, հող ու մոխիր դարձած հայ հարստութեան մասին. անէծքը շրթունքին սառած հայ դիմակի մասին, կորցրած ազիզ զաւակը ողբացող հայ ծնողի մասին. մերկ ու քաղցած թափառող հայ որբերի մասին...

Ի՞նչ արժեն ձեր և մեր բարոլական քարոզները հրի ու սրի մատնուած հայ ժողովրդի համար:

Հայը բարոլագիտական քարոզների կարիք չունի. նա կարօտ է արդարադատութեան որ գոլութիւն չունի: նա տեկական իշխանութեան պաշտպանութիւնն է հայում. բայց նրան կամ ապահովեցնում են «հարկաւոր խիստ միջոցները ձեռք են առնուած» սովորական բառերով և մի ժամ յետոյ մատնում նրան մահմեդական և ոռու խուլեղանների քմահաճոլքին և կամ պատասխանում են ցինիքական ժպիտով «Ազատութիւն էիք ուզում, տրուեցաւ, գնացէք ինքներդ ձեզ պաշտպանեցէք...

Ու Պիղատոսի նման ձեռքները լուալով գոչում են «մենք մեղաւոր չենք» թէև հենց այդ Պիղատոսների հրամանով սպանւում են հարիւրաւոր հայեր, ալրւում, կողոպտւում են հայ թաղերը և ոմբակոծւում բացառապէս հայերի տները:

Արհաւերքը գնալով մեծանում է հայկակոն վէրքերի

թիւն ալժմ աճում է վարկեաններով. բայց նրա ողբը,
հառաջանքը լսող չը կար:

Խուլ է երկինքը, խուլ է երկիրը:

Եւ ալսպիսի օրհասական ըռպէներում բարոյական
քարոզները ինչ մշտք ունին, ինչ նշանակութիւն ունին:
ԶԵ որ նա Աւետարանը անդիր գիտէ, որ լիքն է բա-
րոյական քարոզներով: ԶԵ որ Մովսէսի «Ակն ընդ ականը»
վաղուց մոռացած նա սրտով փարել էր Աւետարանին ու
խաչին և իւր հաւատացեալ բազուկները կարկառած, օգ.
նութեան էր կանչել քրիստոնեայ Ուուսաստանին, ընդդէմ
ոչ-քրիստոնեայ մահմեդականների:

Բայց ինչ եղաւ: Խաչն ու Արետարանը պաշտող
Ուուսաստանում նա նոյնքան տանջուեց ու տանջուեմ է
որքան և մահմեդականները թիւրքիայում: Ովքեր էին և
ովքեր են Լոբանով—Ուուստովսկինները, Սիվիադինները,
Պէտէները, Պօբէդօնոսցեանները, Տրէպովսերը. Գօլիցիննե-
րը. Ֆադէևները և ալլք:

Սրանք Աւետարանի աշակերտները չեն, նոյն խաչի
հաւատացեալները չեն:

Ուրեմն ինչ արժեն ձեր և մեր բարոյական քարոզ-
ները մահմեդական կատաղութեան մատնուած հային,
իշխանութիւնից լքուած հային, արդարադատութեան եր-
կնքի ու Պալատի դռները ճանկոտող հային:

Դուք, բարոյախօսներ, ուրիշ ինչ դարման կամ մի-
ջոց ունիք այն բանի գէմ, որ հայը ինքն իրեն կործան-
ման վտանգի մէջ զգալով և համոզուած լինելով, որ
շըշապստուած է մի կողմից կաշառակերներով, միւս կող-
մից վալրենութեամբ մոլեգնած ամբոխով, որոնց մէջ բա-
րոյական զէնքերով իւր գոյութիւնը պահպանել չի կարող
—ակամայ գլորվում է լանցանքների մէջ, այն է—սպա-
նում է իրեն սպանողին, թալանում է իրեն թալանողին,
ոչնչացնում է իւր քրտինքով վաստակած գոյքն ալրող,

ոչնչացնողի գոյքն ու հարստութիւնը.

Եհարկէ ալսպիսով Կովկասը կրկնակի է տուժում և հուանական է որ եթէ իրերի դրութիւնը չը փոխուի, սիրուն Կովկասում քար քարէ վրայ չի մնալ:

Հայի համար ուրիշ ելք չը կալ: Երբ նրան չեն պաշտպանում, ընդհակառակը ոգի իրուին աշխատում են զինաթափ արած մատնել Պանիսլամիսոների քմահաճոյքին, նա ստիպուած է ինքն իրեն պաշտպանելու ճիշտ այն միջոցներով, որպիսի միջոցներով կամենում են իրեն ընաջինջ անել:

Հօ՛ չի կարելի խորհուրդ տալ հային, որ նա, ոչխարի նման, իւր վիզը պարզի մահմեղականների ու կօզակների որի տռած:

Բայց ինքնապաշտպանութեան զէնքը ձեռքին, վերջնական հարուածը տալսոց և ստանալուց առաջ, հայի ձեզ է դիմում, Ուուսաստանի ազնիւ քաղաքացիներ, հրէական կատաղութեան մատնուած Յիսուսի նման գոչելով «Անցո զբաժակս զայս լինէն»... Կովկասը շինող, շէնցնող հայի զլիսին ընկած բարբարոսութեան վայրենի փոթորիկը ցրել կարող է բ:

Փառք Աստուծոյ, Սիպետինների, Պլէվէնների, Պօրէդոնօսցենների, Տրիպովների և նմանների հաստատած չինական պարի պը ալլես ձեզ չի բաժանում կալսերական պալատից: Դուք այժմ հնարաւորութիւն ունիք Կովկասեան տառապտնքները ու վերքերը բանալու թէ կալսեր եւ թէ ուուս ժողովրդի առաջ կարող էիք մահմեղական յետին նպատակները զեկուցանելու, որոնց առթիւ ալնքան փաստեր ունիք: Եւ այս բոլորից յետով կարող էիք միջնորդելու, որ նա մի շնորհ միայն անէր բազմատանջ հային, այն է՝ մեր սիրուն երկիրը աւլէր, մաքրէր կաշառակեր, իրենց պաշտօնի բարձրութիւնից ցած գլորուած պաշտօնեաներին, որոնց պաշտած միակ սըբութիւնն է նապօլէօնի շեշտած երրորդութիւնը—առաջինը դրամ, երկրորդը դրամ և երրորդը դրամ:

Այս անարդ մետաղին ծախուեցաւ ուստաշական նաւա-

տորմը, ոռւսական բանակը, նրա պրեստիժը, վարկը, մեծութիւնը...

Այս անարդ մետաղին է զոհւում նաև սիրուն կովկասը, որի կորստեան սպառնալիքը գնալով մեծանում է:

Մինչեւ որ հալի ձալնը, բողոքը չը հասնի ուր հարկն է, մենք դառնանք այն անմեղ լուրերին, որ երևացին մամուլի մէջ, բայց որոնց վրայ լուրջ ու շագրութիւն դարձնող չեղաւ:

Առաջինը՝ որ Պանիսլամիստները միացել են վրացոց «Սաքարթվելո» լեզափոխական մարմնի հետ:

Երկրորդ՝ որ իշխան Ն. (Նակաշիձեն) գիտէր համիսլամականների նպատակները, որոնց ցանկութեամբ աշխատում էր խոչընդուն հանդիսացող հալ պաշտօնեաններին հնուացնել և դրական պաշտպանութիւն էր ցոյց տալիս մահմեդական ագիտատորներին... (Ընթ Օ՛Տ.):

Եւ երրորդ՝ Սև ծովի ավերում մի շոգենաւ զէնք է բռնուած եղել, բայց չնորհիւ առատ կաշառքի զէնքերը ափ են իշեցրել...

Հարցի գլխաւոր առանցքը կազմում է շոգենաւով բերուած զէնքը իհարկէ և իւրաքամմթերքը:

Ո՞ւմ համար են բերուել զէնքերը և ի՞նչ եղան:

Եթէ Դոկմի թաթարների մէջ ի նպաստ Կովկասի մահմեդականների որևէ շարժում նկատուած լինէր, կարելի էր ենթադրել, որ զէնքերը բաժանուած են նրանց մէջ:

Բացի Դոկմի թաթարներից, կան նաև Տաճկներ Բաթումի շրջանուս, որոնք անկասկած պատրաստուած պէտք է լինեն և սպառում ընդհանուր ապստամբութեան դրօշը պարզելուն: Սակայն սրանց զինելու համար սուլթանը ծովալին ճանապարհով զէնք ուղարկելու ոիսկ չէր անիր, քանի որ ծորոխն ալնքան մօտ և թրքական ափեց ոռւսական ափը զէնք անցնելը կարօտ չէ ոիսկի, ոչ ուժուարութեան, մանաւանդ երբ ի նկատի առնենք կաշոռքի ամենազօր ոյժը.

Մնում է Կովկասի պարսիկներին զինելու հարցը՝
թալյա պէտք ի նկատի առնել, որ պարսկաշատ կենդրոն-
ների և Սև ծովի միջև կայ Վրաստանը, մօտ 5—600
վերստ տարածութիւն։ Ի հարկէ Վրաստանի թիկունքին
աղեղնաձև գտնւում են լեռնցիք, որ սկսուելով Սև ծովի
ափերից, կորում են Կովկասեան լիոները և հասնում
մինչև Կասպից ծովի ափերը։ Սրանք ի հարկէ նոյնպէս
կարող են պէտք գալ Սուլթանին, որոնց վրա մեծ լոյս
ունին Բոսֆորի գիպլոմատները։ Սակայն թէ լիշեալ գէն-
քերն ու ռազմամթերքը նրանց ձեռքն անցած լինէին,
ալդ ինքնըստինքեան պատերազմասէր և անհանգիստ
տարը չէր լավաղի եթէ ոչ շուտ, գոնէ սեպտեմբերի
դէպքերի ժամանակ ինքն իրեն ցոլց տալ,

Կարելի է ենթադրել, որ լիշեալ գէնքերը նոյն ալդ
լեռնցիների միջոցով, ձեռք է ձեռք հասել եւ Բագու-
կամ Գանձակ։ Սակայն ալդ ենթադրութիւնն էլ մեզ ան-
հիմն է երկում, որովհետեւ լիշեալ նահանգներնց գէնք
ներմուծելու համար աւելի ապահով ճանապարհներ կան,
առաջինը Տաճկաստանից Պարսկաստան, այն տեղից էլ
կասպից ծովով ուղղակի թագու, որի համար Ասլան Ա-
շուրովի, Եղբարք Թաղիկների, Պադաշեկի, Պասուլովի,
Թաղիկների և այլոց շողենաւերը կարող էին գեղեցիկ և
անվտանգ կերպով տեղ հասցնել, մանաւանդ «Ը. Օ՛.»
թղթակցի ակնարկած իշխան Ն. ի օրով, Գալով Գանձա-
կի և Երևանի նահանգներին, սըանց զինելու համար
հարկ չը կալ ոչ Սև ծովին, ոչ լեռնցիների աջակցութեան
դիմելու։ Սրանք ալնքան մօտ են Պարսկական և Տաճ-
կական սահմաններին, որ հեշտութեամբ կարող էին ու-
զածի չափ գէնք ներմուծել, ինչպէս անում են շարու-
նակ։

Ուրեմն ինչ եղան ալդ գէնքերը, ո՞ւր գնացին. ար-
դեօք մեր ուրիշ հարեւանների համար էին. խոհեմութիւ-
նը պահանջում է որ լուենք։

Ալո հարցին մենք կը պատասխանենք, որ շատ հա-

ւանական է, որ Սուլթանը յիշեալ զէնքերը ուղարկել էր Վրաստանի համար և նրանք մտել են Աճարա, Գուրիա և Իմչըթթւ Եթէ մեր այս ենթադրութիւնը սխալ չէ, ուրեմն սխալ չէ նախ՝ այն, որ վրացիք գործում են մահմեդականների հետ ձեռք-ձեռքի տուած և երկրորդ այն, որ «Ը, ՕՌ.» թղթակցի ակնարկած Ն.-ն իշխան նակաշիձէն էր,

Որ վրացիք մահմեդականներ չեն, որ Վրաստանի ժողովրդի մէջ չը կայ մահմեդականների վայրենի բնադրները, գաղանութիւնները և որ նրանք երբէք հայերի դէմ զէնք չեն բարձրացնի - որոնց մասին մենք տարակոյս չունինք: Սակայն չենք կարող չը շեշտել, որ այդ անհամապատասխան միութեամբ Կովկասին սպառնացող վտանգը կրկնակի ծանրանում է:

Մեր նախորդ յօդուածում ասացինք, որ վտանգ է սպառնում ամբողջ Կովկասին և ի նկատի առնելով հայերի և վրացինների կրած տառապանքները մահմեդականներից, յոյս յայտնեցինք, որ այդ երկու ազգերը մեծ դեր ունեն կատարելու, թէ մահմեդականները կարող են մտնել Կովկաս հայերի և վրացինների դիակների վրայով...

Սակայն Եթէ ճիշտ է, որ վրաց և մահմեդականների մէջ տեղի է ունեցել միութիւն, այն ժամանակ կարելի է պնդել, որ միութեան կազը կռողն ուրիշ ոչ ոք չէ, եթէ ոչ Կարմիր Սուլթանը, իհարկէ անելով գըքաւոր կամ բերանացի որոշ խոստումներ, որով և վրացիք իրենց այդ կողմից ապահովուած համարելու դըժքաղդութիւն ունին:

Այս ենթադրութիւնները մենք անում ենք ոչ թէ վրացիններին խանգարելու մտքով, այլ նրանց վերջնական կորստից փրկելու փափագով, թող թերթեն վրացիք իրենց պատմութեան արինոտ էլերը, թող յիշեն մահմեդականներից կրածդարաւոր հալածանքները, հաւածանքներ, որոնք ստիպեցին Ռուսաստանի դիրկը նե-

տուելու։ Թողյիշեն մահմեդականացած բազմաթիւ վրացիներին, որոնք իսլամի մէջ որոնել են իրենց միակ փրկութիւնը։ Եւ թող գիտնան, որ Սուլթանի և նմանների արած խոստումներո, թէկուզ լինին նրանք գրաւոր և իրեն Սուլթանի էլ ստորագրութեամբ վաւերացած, —ոչ մի գրօշի նշանակութիւն չունին։ Դրանք հոգեվարքի վերջին ճիգեր են — աւելի ոչինչ։ Պէտք է վրացիք դրական կերպով համոզուած լինեն, որ Թիւրքիան ոտքը կովկաս դնելուն պէս չի յապաղի ոչ միայն իւր խոստումները ջնջելու, այլ և չի յապաղի ամբողջ Վրաստանը բնաշխինջ անելու. որովհետև այդ երկիրը, երեք կողմից սեղմուած է մահմեդականների մէջ, Արևմուտքից թիւրքերը, Հիւսիսից լեռնցիք և Արևելքից պարսիկները, դեռ չեմ ասում Հարաւից սպառնացող վտանդը, երբ հայերը արդէն ընկճուած կը լինեն։

MARS.